ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՕՁՈՒՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, 1731, փողոց 6, շենք 10,
Հեռ. (0253) 6-16-62, Վեբ-կայք: http://www.odzun.am, Skype: odzun.lori, Էլ. փոստ: odzun.lori@mta.gov.am

թիվ 116-16
04 ապրիլի, 2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

Ձեզ ենք ներկայացնում Օձուն գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 4-ի N 10-ից N 13 որոշումները:

Առդիր՝ հինգ թերթ:

Հարգանքով՝
Օձուն համայնքի ղեկավար *Ա. Տիգրանյան*

Կատարող՝ Վ. Ձավարյան
հեռ. 0253-6-16-62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

4 ապրիլի 2016 թվական, N 10-Ա

ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-Ի ԵՐՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համաձայն „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, 12-րդ, 12[1], 14-րդ և 15-րդ հոդվածների՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Օձուն գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 4-ի երրորդ արտահերթ նիստի օրակարգը.

1) ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-112-0053-0095, 06-112-0460-0031 ԵՎ 06-112-0037-0031 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ.

3) ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 55-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (7)
Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Դեմ (չկա)

Ձեռնպահ (չկա)

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2016թ., ապրիլի 4
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

4 ապրիլի 2016 թվական, N 11-Ա

ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի, 69-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Օձուն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման ընթացքի մասին առաջին եռամսյակի եռամսյակային հաշվետվության հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ (7)
Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Դեմ (չկա)

Ձեռնպահ (չկա)

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2016թ., ապրիլի 4
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

4 ապրիլի 2016 թվական, N 12-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-112-0053-0095, 06-112-0460-0031 ԵՎ 06-112-0037-0031 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, 38-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետի, 46-րդ, 47-րդ և 51-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ մասի, 63-րդ հոդվածի երրորդ կետի 67-րդ, հոդվածի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի «Բ» ենթակետի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

Հիմք ընդունելով Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, գ. Օձուն, փողոց 5, փակուղի 4, N 17 հասցեում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0053-0095 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.16741 հեկտար մակերեսով հողամասը, բնակելի կառուցապատման շինություն կառուցելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել հինգ հարյուր ութսուն հազար (580 000) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար մեկ հազար (1 000) ՀՀ դրամ:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող, գ. Օձուն, փողոց 5, N 69/1 հասցեում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0460-0031 ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0.02 հեկտար մակերեսով հողամասը, գյուղատնտեսական արտադրական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել յոթանասուն հազար (70 000) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար մեկ հազար (1 000) ՀՀ դրամ:

3. Համայնքային սեփականություն հանդիսացող, գ. Օձուն, փողոց 5, N 11 հասցեում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0037-0031 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.0048 հեկտար մակերեսով հողամասը, հասարակական նշանակության շինություն կառուցելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

Աճուրդի մեկնարկային գին սահմանել տասնյոթ հազար (17000) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար մեկ հազար (1.000) ՀՀ դրամ:

4. Վերոնշյալ հողամասերը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Հողամասերի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

6. Օձուն համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել սույն որոշման առաջին, երկրորդ և երրորդ կետերում նշված հողամասերի աճուրդը:

7. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Օձուն համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 30-ի «ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 06-112-0037-0031 ԵՎ 06-112-0442-0064 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» N 21-Ա որոշման առաջին կետը:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (7) **Դեմ (չկա)** **Ձեռնպահ (չկա)**

Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2016թ., ապրիլի 4
Գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

4 ապրիլի 2016 թվական, N 13-Ա

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 55-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի առաջին մասի չորրորդ կետի, 75-րդ հոդվածի՝

Օձուն համայնքի ավագանին որոշում է.

1.Օձուն համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 30-ի «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-112-0460-0031 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 55-Ա որոշումը ճանաչել չեղյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (7)
Ա. ԱՂԻԿՅԱՆ
Ս. ԱՍՐՅԱՆ
Ա. ԲԵԺԱՆՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Ս. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

Դեմ (չկա)

Ձեռնպահ (չկա)

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2016թ., ապրիլի 4
Գ. Օձուն